



**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ**

0014, ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1

N ԴԴ-17-Ե- *18624*


20.05.2014թ.

Բողոք բերած անձ՝ Արթուր Սաքունցին
/ք.Վանաձոր, Տիգրան Մեծ 59/

Ձեզ է ուղարկվում թիվ ԵԿԴ/0043/11/14 բողոքով կայացված որոշումը 17
թերթից:

ԴԱՏԱՎՈՐ

Ա.ԲԵԿԹԱՇՅԱՆ



գործ՝ ԵԿԴ/0043/11/14

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Բողոքը քննության առնելու մասին

19 մայիսի 2014թ.

ք.Երևան

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը՝



Նախագահությամբ՝ դատավոր՝

Ա.Բեկթաշյանի

Քարտուղարությամբ՝

Կ.Կարապետյանի

Մասնակցությամբ՝

բողոքաբերի ներկայացուցիչ՝

Ա.Սաքունցի

Դռնբաց դատական նիստում՝ քննության առնելով բողոքաբեր Յեղիմե Չարությունի Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի և Արայիկ Զալյանի բողոքը՝ թիվ 62202513 քրեական գործով՝ Յեղիմե Պետրոսյանին դատավարության կողմ ճանաչելու, նախաքննության մարմնի 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ՝

Գործի դատավարական նախապատմությունը.

2013 թվականի մայիսի 29-ին դիմող Յեղիմե Չարությունի Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի և Արայիկ Զալյանի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին, որով խնդրել է պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին տրամադրելու քրեական գործ հարուցելու մասին որոշումը, ինչպես նաև ճանաչել Յեղիմե Պետրոսյանին որպես տուժողի իրավահաջորդ՝ սույն քրեական գործով վարույթում ներգրավվելու հարցում, որն էլ ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

2013թ. հունիսի 5-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանի կողմից կայացվել է որոշում՝ պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

2013թ. հունիսի 27-ին Յեղիմե Պետրոսյանի կողմից ներկայացվել է դիմում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ՀՀ հատուկ քննչական ծառայության

քննիչ Մ.Բաբայանի 2013թ. հունիսի 5-ի «Պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու մասին» որոշման դեմ:

2013թ. հուլիսի 16-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել Հ.Պետրոսյանի կողմից ներկայացված դիմումը մերժելու մասին:

2013թ. հուլիսի 17-ին Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի և Արայիկ Զալյանի կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայություն է ներկայացվել դիմում՝ թիվ 62202513 քրեական գործով Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջի մասին:

2013թ. հուլիսի 23-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ստացվել է պատասխան գրություն, ըստ որի՝ մերժվել է տուժողի իրավահաջորդ ճանաչման դիմումը՝ նույն պահանջով նույնաբովանդակ դիմում ներկայացնելու պատճառաբանությամբ:

2013թ. օգոստոսի 16-ին Հ.Պետրոսյանի ներկայացուցիչ Արթուր Սաքունցը ներկայացրել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազություն՝ պահանջելով վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ.Բաբայանի 05.06.2013թ. պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը, և Հայկ Մովսիսյանին տուժող, Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելուն պարտավորեցնելու մասին:

2013թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ դիմում-բողոքը ներկայացվել է քրեադատավարական օրենքով սահմանված կարգի խախտմամբ, քանի որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դիմողը իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշումը բողոքարկել դատարան:

2013թ. դեկտեմբերի 18-ին բողոքաբերների կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ.Ա.Բաբայանին միջնորդություն է ներկայացվել թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին տուժող, Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջի մասին:

2013թ. դեկտեմբերի 18-ին բողոքաբերների կողմից դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն, խնդրելով պարտավորեցնել նախաքննության մարմնին Հայկ Մովսիսյանին տուժող իսկ նրա մորը Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջի մասին:

2013թ. դեկտեմբերի 24-ին վերը նշված միջնորդությանը ի պատասխան ստացվել է պատասխան գրություն, ըստ որի՝ թիվ 62202513 քրեական գործով վարույթը 2013թ. դեկտեմբերի 10-ին կարճվել է:

2013 թվականի դեկտեմբերի 28-ին բողոքաբերների կողմից դիմում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին՝ 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները տրամադրելու պահանջի մասին, որը մերժվել է:

2014 թվականի փետրվարի 24-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ստացվել Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի և Ա.Զալյանի դիմումը թիվ 62202513 քրեական գործով Հեղինե Պետրոսյանին դատավարության կողմ ճանաչելու, նախաքննության մարմնին 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ



62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Բողոք բերած անձի ներկայացուցչի բացատրությունը.

Բողոքաբեր Ա.Սաքունցի կողմից 2014 թվականի փետրվարի 24-ին բողոք է ներկայացվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան թիվ 62202513 քրեական գործով՝ Հեղինե Պետրոսյանին դատավարության կողմ ճանաչելու, նախաքննության մարմնին 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Բողոքաբեր Ա.Սաքունցը պնդեց ներկայացված բողոքը և բացատրություն տվեց այն մասին, որ ՀՀ զինված ուժերի N զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 13-րդ վաշտի 3-րդ դասի 2-րդ ջոկի հրաձիգ, կոչումով շարքային Հայկ Սովսիսյանի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելու նպատակով անդամախեղում կատարելու դեպքի առթիվ 2011թ. հուլիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով ՀՀ ՊՆ 3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ:

2011թ. նոյեմբերի 29-ին Հայկ Սովսիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

2012թ. նոյեմբերի 20-ի դատավճռով Հայկ Սովսիսյանը նույն հոդվածով մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամկետով:

2012թ. նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը, ԼՂՀ քննչական մեկուսարանի 8-րդ խցում Հայկ Սովսիսյանին գտել են մահացած:

2012թ. նոյեմբերի 28-ին ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնում ԼՂՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12200712 քրեական գործը՝ ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության մեկուսարանի կալանավոր Հայկ Արտավազի Սովսիսյանի ինքնասպանության դեպքի առթիվ:

2013թ. ապրիլի 11-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճռի դեմ:

2013թ. ապրիլի 16-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կայացրել է որոշում ՀՀ գլխավոր դատախազի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին, ըստ որի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Հայկ Սովսիսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով բեկանել է Հայկ Սովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ ճանաչել անմեղ և արդարացրել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Ըստ նախաքննության մարմնի՝ ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնում կատարված նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով



հիմնավորվել է, որ ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության աշխատակիցների և քննչական մեկուսարանի կալանավորների, ամբաստանյալի, դատապարտյալների կողմից Հայկ Մովսիսյանի նկատմամբ որևէ սպառնալիք, դաժան վերաբերմունք, հոգեբանական ճնշում կամ բռնություն չի գործադրվել, անձնական արժանապատվությունը նվաստացնելու ուղղված գործողություններ չեն կատարվել, այսինքն՝ նրանց արարքներում բացակայում են ԼՂՀ քրեական օրենսգրքի 110-րդ /ինքնասպանության հասցնելը/ և 111-րդ /ինքնասպանության հակելը/ հոդվածներով նախատեսված հանցակազմների հատկանիշները:

Վերը նշված հիմքով 2013թ. մարտի 18-ին ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչի կողմից որոշում է կայացվել թիվ 12200712 քրեական գործի մասը կարճելու վերաբերյալ:

Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացրած պաշտոնատար անձանց գործողություններին իրավական գնահատական տալու պատճառաբանությամբ:

2013 թվականի մարտի 19-ին որոշում է կայացվել քրեական գործը ՀՀ գլխավոր դատախազության միջոցով ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու մասին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի 2013թ. մարտի 28-ի որոշմամբ թիվ 12200712 քրեական գործի նյութերով հարուցվել է նոր թիվ 62202513 քրեական գործը Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց պաշտոնական անփութության ենթադրյալ դեպքի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Նույն օրը թիվ 12200712 քրեական գործը միացվել է թիվ 62202513 քրեական գործին:

2013թ. հունիսի 29-ին իր վստահորդի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին, ըստ որի խնդրել է «պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին տրամադրելու քրեական գործ հարուցելու մասին որոշումը, ինչպես նաև ճանաչել Հեղինե Պետրոսյանին որպես տուժողի իրավահաջորդ սույն քրեական գործով վարույթում ներգրավվելու հարցում»:

2013թ. հունիսի 1-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է պատասխան գրություն ըստ, որի ներկայացված դիմումը ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

2013թ. հունիսի 5-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանի կողմից կայացվել է որոշում՝ պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

2013թ. հունիսի 27-ին իր վստահորդի կողմից ներկայացվել է դիմում Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին դատարան խնդրելով՝ 2013թ. հունիսի 5-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ.Բաբայանի որոշումը վերացնել՝ Հայկ Մովսիսյանին տուժող ճանաչելու իսկ իրեն տուժողի իրավահաջորդ:

2013թ. հունիսի 16-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել ներկայացված դիմումը մերժելու մասին, դատարանը մերժումը հիմնավորել է հետևյալ կերպ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի և 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող



մարմինների գործողությունների դեմ բողոքը նախ պետք է ներկայացնել դատախազին, իսկ դատախազի կողմից այն չբավարարելու դեպքում նոր միայն կարող է ներկայացնել դատարան:

Դատարանը արձանագրել է, որ Յեղիմե Պետրոսյանի կողմից դատարան ներկայացված բողոքը ներկայացվել է քրեադատավարական օրենքով սահմանված կարգի խախտմամբ քանի որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Բաբայանի կայացրած որոշումը չի բողոքարկվել վերադաս դատախազին:

2013թ. հուլիսի 17-ին իր վստահորդը ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին ներկայացրել է դիմում թիվ 62202513 քրեական գործով Յեղիմե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջի մասին:

2013թ. հուլիսի 23-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ստացվել է պատասխան գրություն ըստ, որի մերժել է տուժողի իրավահաջորդ ճանաչման դիմումը պատճառաբանելով, որ «Յեղիմե Պետրոսյանը նույն պահանջով նույնաբովանդակ դիմում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը նաև 2013թ. մայիսի 29-ին, որի քննարկման արդյունքում 2013թ. հունիսի 5-ին կայացվել է «պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշում/.../»:

2013թ. օգոստոսի 16-ին իր վստահորդը ներկայացրել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազություն պահանջելով վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Բաբայանի 05.06.2013թ. պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը, և պարտավորեցնել վերջինիս իր վարույթում քննվող թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին ճանաչելու տուժող, Յեղիմե Պետրոսյանին ճանաչել տուժողի իրավահաջորդ:

2013թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ դիմում-բողոքը ներկայացվել է քրեադատավարական օրենքով սահմանված կարգի խախտմամբ քանի որ, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դիմողը իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշումը բողոքարկել դատարան:

2013թ. դեկտեմբերի 18-ին դիմողների կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայության ավագ քննիչ Մ.Բաբայանին ներկայացվել է միջնորդություն թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին տուժող, Յեղիմե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջի մասին:

2013թ. դեկտեմբերի 18-ին դիմողների կողմից դիմում բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն, խնդրելով պարտավորեցնել նախաքննության մարմնին Հայկ Մովսիսյանին տուժող իսկ նրա մորը Յեղիմե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջի մասին:

2013թ. դեկտեմբերի 24-ին վերը նշված միջնորդությանը ի պատասխան ստացվել է պատասխան գրություն, ըստ, որի հայտնել են, որ թիվ 62202513 քրեական գործով վարույթն 2013թ. դեկտեմբերի 10-ին կարճվել է:

2014թ. հունվարի 11-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ստացվել է դիմում բողոք՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված, որի առաջին հասցեատերը մակագրել է ՀՀ ՀԲԾ-ին ուն կողմից էլ մերժվել էր դիմումը:

Հինք ընդունելով այն հանգամանքը, որ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության



կարևորագույն խնդիրներից մեկը, 2013թ. դեկտեմբերի 28-ին դիմումատուների կողմից ներկայացվել է դիմում ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին և ավագ քննիչ Բաբայանին պահանջելով տրամադրել 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները:

2014թ. հունվարի 22-ին ստացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանի պատասխան գրությունը ըստ, որի հայտնվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարացնելու մասին որոշման պատճենը ուղարկվում է կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին ինչպես նաև տուժողին նրա ներկայացուցչին/.../:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննված թիվ 62202513 քրեական գործով դուք չեք հանդիսացել քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով նշված դատավարության մասնակից, ուստի քրեական գործով վարույթը կարճելու որոշման և վարույթի կարճման գործի նյութերի պատճենները Ձեզ տրամադրվել չեն կարող:

Դիմումի իրավական հիմնավորումը և պահանջը.

Պետության պոզիտիվ պարտավորության մասին պնդումներ.

2011թ. օգոստոսի 3-ին ՀՀ ՊՆ 3-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա. Ադամյանի կողմից Հայկ Սովսիսյանին մեղադրանք է առաջադրվել է ՀՀ քր. օր. 363 հոդվածի 1-ին մասով /զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը /անդամախեղելը/, որը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն/:

2011թ. նոյեմբերի 29-ին նախաքննական մարմինը որոշում է կայացրել Հ.Սովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2012թ. նոյեմբերի 20-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով Հայկ Սովսիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քր. օր. 363-րդ 2-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամկետով:

Հայկ Սովսիսյանը դատապարտվել և ձերբակալվել է ՀՀ իրավապահ և ՀՀ դատական իշխանությունների կողմից, իսկ այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացին ՀՀ դատարանի կողմից ազատազրկման դատապարտված պահվել է ԼՂՀ քննչական մեկուսարանի 8-րդ խցում /Շուշի ՔԿՀ-ում/ եղել է ՀՀ պատասխանատվության տակ, քանի որ Հայկ Սովսիսյանը դատապարտվել է ՀՀ իշխանությունների կողմից:

Նախաքննության մարմինը ընդունում է, որ Հայկ Սովսիսյանը մահացել է 2012թ. նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը, ԼՂՀ քննչական մեկուսարանի 8-րդ խցում:

ԼՂՀ քննչական մեկուսարանը միանշանակ պատկանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

ՀՀ իշխանությունները Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով դատապարտված Հայկ Սովսիսյանի պահպանությունը հանձնել են ԼՂՀ քննչական մեկուսարանին /Շուշի ՔԿՀ/:



Իրենց հայտնի չէ թե պետությունների միջև ինչ պարտավորություններ են առկա ԶԶ քաղաքացիներին ԶԶ դատարանների կողմից դատապարտված ԼԴՅ ՔԿԶ-ներում պահելու վերաբերյալ, սակայն կարող ենք արձանագրել այն հանգամանքը, որ եթե առողջ անձը ԶԶ ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել, ապա պետությունը /Յայաստանի Հանրապետությունը/ պարտավոր է ներկայացնել անձի մահվան հանգեցրած իրադարձությունների հանձնաժողովի բացատրություն, և այն չներկայացնելու դեպքում պետությունը խախտած կլինի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածը Պետության վրա պարտավորություն է դնում պաշտպանել կյանքի իրավունքը՝ ապահովելով քրեական իրավունքի արդյունավետ դրույթների առկայությունը՝ կանխելու համար կյանքի դեմ ուղղված հանցագործությունները՝ հիմնավորելով այդ դրույթների խախտման համար կանխարգելիչ, վերացնող և պատժիչ մեխանիզմների վրա: Այն նաև պահանջում է որպեսզի իրականացվի արդյունավետ պաշտոնական քննություն, երբ տեղի է ունեցել սպանություն: Նման քննություն իրականացնելու պարտականությունն առաջ է գալիս սպանության և այլ կասկածելի մահվան դեպքերի հետևանքով, երբ հանցագործներն անհատներ են կամ պետական մարմիններ կամ անհատ են: Քննությունը պետք է լինի արդյունավետ այն իմաստով, որ այն կարողանա հանգեցնել որոշակի փաստերի հաստատմանը և պատասխանատուների բացահայտմանն ու պատժին:

Իշխանությունները պետք է ձեռնարկեն իրենց հասուն պատշաճ քայլերը դեպքին առնչվող բոլոր ապացույցները ձեռք բերելու համար: Ավելին Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջները գերակայում են պաշտոնական քննության ժամանակ, երբ դրանք կիրառվում են ներպետական դատարաններում քննություն իրականացնելիս, քննությունները, ընդհանուր առմամբ, ներառյալ դատական քննության, պետք է բավարարեն օրենքով նախատեսված կյանքի իրավունքը պաշտպանելու պոզիտիվ պարտականության պահանջները: Ներպետական դատարանները չպետք է որևէ պարագայում թույլ տան, որպեսզի կյանքի համար վտանգավոր հանցագործությունները մնան անպատիժ:

Որպեսզի քննությունը լինի արդյունավետ, քննությունն իրականացնող և դրա համար պատասխանատու անձինք պետք է լինեն անկախ և անկողմնակալ թե օրենքով և թե գործնականում: Դա նշանակում է ոչ միայն դեպքերի հետ կապ ունեցողների հետ աստիճանակարգային և ինստիտուցիոնալ կապի բացակայության, այլ նաև գործնական անկախության: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո պահանջվող արդյունավետ քննությունը նպատակ է հետապնդում ապահովել հասարակության վստահությունը իշխանությունների նկատմամբ՝ վերջիններիս կողմից օրենքի պահպանման հարցում, կանխելու համար ապօրինի գործողությունների նկատմամբ հանդուրժողականության և համագործակցության դրսևորումներն այն գործերով, որոնցում ներգրաված են պետական մարմիններ կամ պաշտոնյաներ՝ ապահովելու համար նրանց պատասխանատվությունն իրենց պատասխանատվությամբ կատարված սպանությունների համար: Բոլոր դեպքերում տուժողի իրավահաջորդը պետք է ներգրավված լինի այդ ընթացակարգերի իրականացմանը, որոնք երաշխավորում են նրանց օրինական շահերի ապահովումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներով հայտնել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի երաշխավորված իրավունքները ոչ թե տեսական կամ պատրանքային են, այլ գործնական են և



արդյունավետ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները մեկնաբանել է որպես այդ դրույթների նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմեր՝ հաշվի առնելով այս իրավունքների հիմնարար բնույթը:

Մասնավորապես, սույն գործին վերաբերելի մասով Կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված կյանքի իրավունքի շրջանակներում արդյունավետ քննություն իրականացնելու պարտականությունը /կյանքի իրավունքի դատավարական բաղադրիչը/ բխում է մարդու իրավունքների դիրքորոշումից, որ եթե առողջ անձը ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել, ապա պետությունը պարտավոր է ներկայացնել անձի մահվան հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, և այն չներկայացնելու դեպքում պետությունը խախտած կլինի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը: Վերը վկայակոչված մեկնաբանություններից ելնելով կարելի է պնդել որ մինչ այժմ խախտված է վստահորդի Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները: Սույն դեպքում Հայկ Մովսիսյանը ՀՀ ոստիկանության կողմից արգելանքի է վերցվել և հետագայում մահացել, ՀՀ կողմից վստահված ԼԴՀ ՔԿԴ-ում, ուստի վերը վկայակոչված նախադեպերը սույն գործի փաստական հանգամանքների հետ նույնական են և ենթակա են կիրառման:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված մի շարք վճիռներում սահմանվել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ոչ միայն նեգատիվ պարտականություններ /ձեռնպահ մնալու համապատասխան ազատություններին միջամտելուց/, այլ նաև պոզիտիվ պարտականություններ /inter alia, սահմանելու տուժողների իրավունքների քրեադատավարական պաշտպանության համարժեք կառուցակարգեր/:

Մասնավորապես՝ Յանուկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 25-րդ կետում արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝ Խորվաթիայի քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում էր տուժողի իրավունքների պաշտպանության մի շարք կառուցակարգեր, այդ թվում՝ սուբսիդիար մեղադրողի գործառույթ իրականացնելու իրավունքը այնուհանդերձ, Յանուկովիչի գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը չի կատարել իր այդ պոզիտիվ պարտականությունը, քանի որ, տուժողին իրական հնարավորություն չի տրվել իրականացնելու իր դեմ ոտնձգություն թույլ տված անձի քրեական հետապնդում:

Յանուկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումը սույն գործի փաստերի վրա տարածելով՝ կարող ենք արձանագրել, որ տուժողի իրավահաջորդ ճանաչելով, տուժողին հնարավորություն չի տրվում իրականացնել իր շահերի արդյունավետ պաշտպանություն:

Քրեական արդարադատության համակարգում տուժողի պահանջմունքները բավարարելու և շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտավորությունը սահմանված է նաև ՄԱԿ-ի 1985թ. նոյեմբերի 29-ի Գլխավոր ասամբլեայի 40/34 բանաձևի 4-րդ կետով, որի համաձայն՝ հանցագործությունից տուժողները ներպետական օրենսդրությանը համապատասխան պետք է ունենան արդարադատության մատչելիության և իրենց պատճառված վնասի արագ փոխհատուցման իրավունք:



Յոթնամյա 6-րդ կետի համաձայն՝ անհրաժեշտ է օժանդակել այն բանին, որ դատական և վարչական ընթացակարգերը ըստ էության համապատասխանեն հանցագործության զոհերի պահանջներին, այդ թվում՝ վարույթի ցանկացած փուլում գործի էության վերաբերյալ տուժողներին կարծիք արտահայտելու հնարավորություն ապահովելու և այդ կարծիքները քննարկելու եղանակով, հատկապես երբ տվյալ հարցը վերաբերվում է տուժողին:

Կոնվենցիայի 1-ի Յոթվածի ուժով /որտեղ սահմանված է, որ «բարձր պայմանավորվող կողմերին իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի 1-ին բաժնում», երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացման և ապահովման առաջնային պատասխանատվությունը դրված է ազգային իշխանությունների վրա: Այդ սուբսիդիար բնույթը արտահայտված է Կոնվենցիայի 13 և 35 §1 հոդվածներում:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորվում է Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների պարտադիր կիրառումն ապահովող իրավական պաշտպանության միջոցների առկայությունը ներպետական մակարդակով: Այդ դրույթի իրականացումն պահանջում է ներպետական իրավական պաշտպանության միջոցների տրամադրումը Կոնվենցիայի հիմքերով ներկայացված «ոչ անհիմն զանգատի» ըստ էության քննության և համապատասխան օգնության տրամադրման համար: Կոնվենցիայի 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանությունը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ օրենքի տեսանկյունից:

Արդյունավետ լինելու համար 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի հասանելի գործնականում և նախատեսված օրենսդրությամբ, մասնավորապես այն իմաստով, որ վերջինս իրականացմանը չպետք է անարդարացիորեն խոչընդոտեն պետության իշխանությունների գործողությունները կամ անգործությունը:

Յատուկ ուշադրություն պետք է դարձնել պաշտպանության գործողության արագությանը, քանի որ չի բացառվում, որ պաշտպանության արդյունավետությունը կարող է տուժել այն տրամադրելու գործընթացի չափազանց մեծ տևողության պատճառով:

Յայկ Մովսիսյանի տուժող լինելու մասին պնդումներ.


Այսպես՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու ընթացքը: Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը /ՅՅ քր. դատ.օր.58-րդ հոդված/: Տուժողը, ելնելով իր դատավարական կարգավիճակից, քրեական գործի քննության ընթացքում օգտվում է մի շարք իրավունքներից, որոնց իրացումը ենթադրում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը հնարավորություն ընձեռել տուժող կողմին իրականացնել քրեադատավարական օրենսդրությամբ վերապահված իր իրավունքները: ՅՅ քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում է նաև տուժողի իրավահաջորդի ինստիտուտը, որը մահացած կամ իր կամքով արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքների և շահերի



իրացման, ինչպես նաև դրանց պաշտպանության արդյունավետ երաշխիք է: Նշված ինստիտուտի գոյությունը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով ամրագրված յուրաքանչյուր անձի՝ իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով՝ տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և կրում է վերջինիս իրավունքները և պատականությունները, հետևաբար տուժողի իրավահաջորդն օգտվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով ամրագրված տուժողի իրավունքներից և պարտականություններից: Տուժողի հասկացության վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, ԵԿԴ/0077/11/12 որոշման 25-րդ կետում ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլ հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այլ խոսքով տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը: Վկայակոչված որոշման 26-րդ կետում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության ընթացքին տուժողի /տուժողի իրավահաջորդի/ մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար, մյուս կողմից, նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը: Քրեական վարույթում անհնար է իրականացնել դատավարական իրավունքներ և պարտականություններ՝ առանց դատավարության մասնակից լինելու, իսկ հանցագործության հետևանքով վնաս կրած անձի դեպքում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

Տուժող ճանաչելու քրեադատավարական կարգին վերաբերող դրույթների համադրված վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը նշված դատավարական ակտի կայացման համար անհրաժեշտ նախապայման է համարում հանցագործության արդյունքում անձին բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս պատճառված լինելու կամ այդպիսի վնաս պատճառելու հավանականության հաստատումը, ինչը սակայն չի կարող մեկնաբանվել այնպես, որ անձին տուժող ճանաչելու համար անհրաժեշտ լինի հանցակազմի բոլոր տարրերի հաստատում կամ վնաս պատճառելու վերաբերյալ սպառիչ տվյալների հավաքագրում:

Վկայակոչված որոշման 27-րդ կետում, ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, արձանագրել է, որ եթե իրավասու պաշտոնատար անձը որոշում է կայացնում քրեական գործ հարուցելու մասին, ապա նա ձեռք բերված տվյալները բավարար է համարում հանցագործության փաստի /հանցակազմի օբյեկտիվ կողմի և օբյեկտի առկայությունը հաստատված համարելու համար: Իսկ եթե քրեական գործ հարուցելու փուլում հայտնի է դառնում ենթադրյալ հանցագործությունից տուժած անձը, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վերջինիս ճանաչելու



որպես տուժող և ներգրավել գործի քննությանը: Համանման կերպով, քրեական գործ հարուցելու փուլում վարույթն իրականացնող մարմինը մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի մերձավոր ազգականներից մեկին պետք է ճանաչի տուժողի իրավահաջորդ, եթե նա այդպիսի ցանկություն է հայտնել: Սույն պարագայում արդեն իսկ հարուցված էր քրեական գործ, որը ստացել է թիվ 62202513 քրեական գործի հերթական համարը և տուժող Հայկ Մովսիսյանի իրավահաջորդ ճանաչելու մասին մոր կողմից ներկայացվել էր համապատասխան դիմում, որպեսզի ներգրավվի վարույթում, որպես տուժողի իրավահաջորդ: Վերը վկայակոչված դատական ակտը թույլ է տալիս պնդելու, որ տուժողի իրավահաջորդ չճանաչելը եղել է նախաքննության մարմնի կամայական և սուբյեկտիվ որոշումը և տվյալ փաստերի ներքո կարելի է պնդել, որ թիվ 62202513 քրեական գործով Հեղինե Պետրոսյանը օրենքով և նրան տրված մեկնաբանությունների ուժով համապատասխանել է տուժողի իրավահաջորդի կարգավիճակին և հետևաբար իրավունք ունի տվյալ վարույթի արդյունքում կայացված որոշումը բողոքարկելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քննիչը քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենն ուղարկում է կասկածյալի, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցիչն /...../: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը և վարույթը կարճելու քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման կարգը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավունք է վերապահում նաև կարճված գործի նյութերին ծանոթանալու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբստանբյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, /...../ կողմից կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

Այդ պարագայում նախաքննության մարմնի կամայական գործողությունների արդյունքում իր վստահորդը զրկված է եղել որոշումը բողոքարկելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից և վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 07-ի ՍԴՈ-844 որոշումը՝ բողոքաբերը խնդրել է՝

1. Թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին ճանաչել տուժող,
2. Հեղինե Պետրոսյանին ճանաչել տուժողի իրավահաջորդ,
3. ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ.Բաբայանին պարտավորեցնել տրամադրել 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները:

Դատարանի իրավական վերլուծությունները.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու



դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

(...):

4. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: (...):

2009 թվականի դեկտեմբերի 07-ի թիվ ՍԴՈ-844 որոշմամբ Սահմանադրական դատարանը արձանագրել է հետևյալը՝ «(...)քրեական գործերով մինչդատական վարույթում բողոքարկման (դատախազական և դատական) ինստիտուտի իրավակիրառման շրջանակներում «գործողություն» և «անգործություն» եզրույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մինչդատական վարույթի իրավակարգավորման շրջանակներում նույնաբովանդակ մեկնաբանվել չեն կարող: Պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք (այդ թվում՝ քրեական վարույթ իրականացնող մարմիններն ու պաշտոնատար անձինք) ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասի նորմատիվ պահանջի համաձայն իրավասու են կատարելու միայն գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում, սույն գործի առարկայի շրջանակներում, պետք է ընկալվի որպես հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց և դատախազի՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկատարում: Վերջինս նույնպես կարող է առաջացնել իրավական հետևանքներ, պատճառ դառնալ մարդկանց սահմանադրական իրավունքների խախտման: Հետևաբար, նման անգործության դատական բողոքարկման նպատակը և ոչ իրավաչափ գործողության դատական բողոքարկման նպատակը նույնական են՝ հետապնդում են իրավունքների պաշտպանության համանման խնդիր: Այլ բան է, որ օրենսդիրը կարող է սահմանել դրանց բողոքարկման տարբեր ընթացակարգեր, սակայն մեկը մյուսով կրճատելու և նման իրավակիրառական պրակտիկա ձևավորելու հանգամանքը վկայություն է այն բանի, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի առկա



խմբագրությունն իր մեջ անորոշություն է պարունակում և կիրառվում է իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության շրջանակներում:

8. Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նախատեսված դատական բողոքարկման կարգին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետևյալ նախապայմանների դեպքում.

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները և օրինական շահերը,
- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Վերջինիս դեպքում հետևում է, որ անձը դատախազի որոշումը կամ գործողությունը բողոքարկելիս պետք է դիմի նաև վերադաս դատախազին: Իսկ իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ նախապայմանի առաջադրումը վիճարկվող նորմի իրավակարգավորման շրջանակներում խոչընդոտ չի կարող հանդիսանալ անձի բողոքն ըստ էության քննելու համար:

Այսպիսով, ինչպես վկայում է վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իրավունքն իրացնելիս նախ պարտավոր է դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադատության մատչելիության իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով, մասնավորապես՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665 և ՍԴՈ-690, բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, կարևորելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ միաժամանակ կարևորել է միջազգային պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: Այդ կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների (այդ թվում՝ ձևական), կարող է իրավաչափորեն ներառել նաև օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատարանական միջոցն սպառելու պայման:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմի դատական պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության շրջանակներում այդպիսի պարտադիր պայմանի առկայությունը, երբ քրեական վարույթ իրականացնող մարմնի, պաշտոնատար անձի անգործությամբ խախտվել են քրեական դատավարության մասնակիցների կամ շահագրգիռ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, և նա չի կարող առանց նախապայմանների իրացնել դատական պաշտպանության իր իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից: Այդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»: ՀՀ

Սահմանադրության և օրենքների հիման վրա այդպիսի համարժեք միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պարտականությունն է»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԱԴԴ/0009/11/10 գործով իր 2011 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ վերլուծության է ենթարկել ՀՀ քրեական դատավարության 103-րդ հոդվածի 1-ին մասը, 263-րդ հոդվածը և 290 հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերը և եկել է այն եզրահանգման, որ նշված հոդվածների դրույթներից բխում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը հստակ սահմանում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկան, այսինքն՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների այն որոշումների և գործողությունների (անգործության) շրջանակը, որոնք կարող են բողոքարկվել դատական կարգով: Բացի այդ, սահմանվում են վերջիններիս բողոքարկման կարգը և այն ժամկետները, որոնց ընթացքում դատավարությանը մասնակցող անձինք կարող են դիմել դատարան՝ իրենց խախտված իրավունքները վերականգնելու համար»:

Վերը նշված վերլուծության հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը նախ և առաջ պետք է պարզի, թե՝

ա) բողոքարկված որոշումը կամ գործողությունը (անգործությունը) մտնու՞մ են արդյոք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկայի մեջ,

բ) բողոքաբերի կողմից պահպանվե՞լ են արդյոք այդ որոշման կամ գործողության (անգործության) բողոքարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ընթացակարգերը,

գ) բողոքաբերի կողմից պահպանվե՞լ են արդյոք մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության թույլատրելի ժամանակային սահմանները,

դ) բողոքաբերն արդյո՞ք ուներ բողոք բերելու իրավասություն,

ե) առկա՞ է արդյոք բողոքին կցվող նյութերի ցանկը (դատավարական փաստաթղթերի պատճեններ, փորձագետի եզրակացություն, տեղեկանք և այլն),

զ) ստորագրվա՞ծ է արդյոք բողոքը»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ հանգամանքները պարզելուց հետո միայն դատարանը կարող է անդրադառնալ ներկայացված բողոքի հիմքերին, այն է՝ բողոքարկող անձի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան դրույթներով հիմնավորված փաստարկներին: Ուստի, եթե դատարանը պարզում է, որ բողոքաբերի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վերոնշյալ պահանջները, ապա, առանց անդրադառնալու բողոքի հիմքերին, դատարանը պետք է մերժի այն:

Իսկ թիվ ԵԿԴ/0125/11/13 գործով 2014 թվականի մարտի 28-ի որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության ինստիտուտները, հանդիսանալով մինչդատական վարույթի ընթացքում անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված կառուցակարգեր, այնուամենայնիվ միմյանցից տարբերվում են մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների օրինականության ստուգման ընթացակարգերով և ժամկետներով: Մասնավորապես, դատախազը, հսկողական գործառույթներ իրականացնելով, նպատակ է հետապնդում կանխել, վերհանել և վերացնել վարույթն

իրականացնող մարմնի կողմից թույլ տրված սխալները, մինչդեռ դատարանի վերահսկողական գործունեության հիմնական նպատակը իրավապաշտպան գործառույթի իրականացումն է: Նշված գործառույթային առանձնահատկություններն էլ հենց պայմանավորում են հսկողության և վերահսկողության ընթացակարգերի տարբերությունը, այդ թվում նաև՝ ժամկետների առումով (մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և դատախազական հսկողության ինստիտուտների առանձնահատկությունների մասին mutatis mutandis տե՛ս Լաուրա Գարեգինի Զարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ կետը)(...):

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը, սահմանելով հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական բողոքարկման կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների, իրավաչափորեն ներառում է նաև իրավունքների պաշտպանության արտադատական միջոցն սպառելու պայման: Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականությունը վիճարկելու տվյալ կարգը՝ որպես ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, հստակ սահմանված է օրենքով, որևէ բացառություն չի նախատեսում և նպատակ է հետապնդում քրեական դատավարության մասնակիցների և շահագրգիռ այլ անձանց համար առավել արդյունավետ ձևով ապահովել դատական պաշտպանության իրավունքի անխափան իրականացումը:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է *Է.Եղինյանի* գործով որոշմամբ արտահայտված այն մոտեցման վրա, որ «(...) դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այլ ոչ թե պատրանքային, այսինքն՝ անձն իր իրավունքների և ազատությունների, օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների շրջանակներում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Ընդ որում, դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է բացառապես ձևական բնույթ ունենան, որպեսզի դիմողը հնարավորություն ունենա իրացնել Սահմանադրությամբ ամրագրված՝ հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները: Բացի այդ, դատարանի մատչելիության սահմանափակումը պետք է օրինական նպատակ հետապնդի, և գործադրված միջոցի (այսինքն՝ սահմանափակման) և սահմանափակմամբ հետապնդված նպատակի միջև պետք է առկա լինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (տե՛ս Էրիկ Իգորի Եղինյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԼԴ/0008/11/10 որոշման 17-րդ կետը):

Է.Եղինյանի գործով արտահայտված վերոշարադրյալ դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի մատչելիության իրավունքի՝ սույն որոշման 18-րդ կետում ամրագրված սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, գործադրված միջոցի և սահմանափակմամբ



հետապնդված նպատակի միջև առկա է համաչափության ողջամիտ հարաբերակցություն: Մասնավորապես, մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունը դատական վերահսկողության հետ միասնական նպատակ է հետապնդում, այն է՝ ապահովել անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանությունը, ինչպես նաև վերականգնել անձանց խախտված իրավունքները և ազատությունները: Ընդ որում, մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների օրինականության ստուգման դատավարական կարգերի առանձնահատկություններով պայմանավորված՝ դատախազական հսկողությունը դատական վերահսկողության համեմատ երբեմն առավել արագ և արդյունավետ կերպով կարող է հասնել իր առջև դրված նպատակների իրագործմանը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որպես մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կառուցակարգի գործադրման նախապայման դատախազական հսկողության սահմանումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում և արդյունավետ վերացնելու օրենսդրի կամքով: Բացի այդ, մինչդատական վարույթի օրինականության երաշխավորմանն ուղղված հսկողական և վերահսկողական տվյալ միջոցների զուգակցումը հետապնդում է մեկ այլ իրավաչափ նպատակ. անձանց շահերի քրեաիրավական պաշտպանությունն իրականացնելով արտադատական կառուցակարգի գործադրմամբ՝ հնարավորինս սահմանափակել դատական գործիքակազմի ներգրավումը և զերծ մնալ ավելորդ հանրային-իրավական միջոցների վատնումից»:

Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Ուսումնասիրելով բողոքը, կից փաստաթղթերը և ներկայացված նյութերը՝ դատարանը հանգում է այն համոզման, որ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

2013 թվականի դեկտեմբերի 18-ին Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի և Ա.Զալյանի կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայություն միջնորդություն է ներկայացվել՝ թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին տուժող, Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջի մասին, միևնույն ժամանակ նույն օրը ՀՀ գլխավոր դատախազին է ներկայացվել դիմում՝ նախաքննական մարմնին պարտավորեցնելու Հայկ Մովսիսյանին տուժող, իսկ նրա մորը՝ տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին, որոնց ի պատասխան՝ ստացվել են ՀՀ հատուկ քննչական ծառայության նույնաբովանդակ 24.12.2013թ. թիվ 18-58կզ-13 և 2014 թվականի հունվարի 08-ի թիվ 18-59-կզ-13 գրությունները այն մասին, որ նշված միջնորդությունները չեն քննարկվել, քանի որ թիվ 62202513 քրեական գործով վարույթը 2013 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ կարճվել է:

2013 թվականի դեկտեմբերի 28-ին Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի և Ա.Զալյանի կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին դիմում է ներկայացվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները տրամադրելու պահանջի մասին, որին ի պատասխան ՀՀ հատուկ քննչական ծառայությունից ստացվել է գրություն այն մասին, որ հարկի առնելով այն



հանգամանքը, որ դիմումատուները թիվ 62202513 քրեական գործով չեն հանդիսացել քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով նշված դատավարության մասնակից, այն է՝ կասկածյալ, մեղադրյալ, պաշտպան, տուժող, տուժողի ներկայացուցիչ, ուստի քրեական գործով վարույթը կարճելու որոշման և վարույթը կարճված գործի նյութերի պատճենները նրանց տրամադրվել չեն կարող:

Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցն ու Ա.Զալյանը քննիչի նշված գործողությունները առանց համապատասխան դատախազին բողոքարկելու 2014 թվականի փետրվարի 24-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացրել դիմում՝ թիվ 62202513 քրեական գործով Հեղինե Պետրոսյանին դատավարության կողմ ճանաչելու, նախաքննության մարմնին 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում քննիչի գործողությունները պետք է բողոքարկվեին համապատասխան դատախազին, այնուհետև՝ դատարան, մինչդեռ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Բաբայանի վերը նշված գրությունները համապատասխան դատախազին չեն բողոքարկվել, ինչի արդյունքում Հ.Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի և Ա.Զալյանի կողմից թույլ է տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգի խախտում:

Միևնույն ժամանակ դատարանը չի անդրադառնում դիմումի հիմքերին, քանի որ բողոքաբեր Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա.Սաքունցի և Ա.Զալյանի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ընթացակարգերը:


Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ՝

Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի և Արայիկ Զալյանի բողոքը՝ Հեղինե Պետրոսյանին դատավարության կողմ ճանաչելու, նախաքննության մարմնի 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

Որոշումը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակման պահից տասնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝



Ա. ԲԵԿԹԱՇՅԱՆ